ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԸ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-5

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ներհոսք, մրցունակություն, ապահովագրություն, անորոշություն*

Նարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2021 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա ընդունվել մագիստրատուրա՝ «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրով: 2023 թ-ից ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ է: 2020 թ.-ից ներգրավված է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբերում՝ որպես հրավիրյալ փորձագետ: Ներկայում աշխատում է ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ որպես մակրոտնտեսագետ:

Հեղինակ է 20-ից ավելի գիտական հրապարակումների, ինչպես նաև համահեղինակ՝ 5 կոլեկտիվ մենագրության:

https://orcid.org/0000-0003-0272-5868

Արդեն երկրորդ տարին անընդմեջ՝ բարձր տնտեսական աճի համատեքստում շարունակվում են թեժ քննարկումները տնտեսական աճի, դրա իրատեսականության, ճշմարտացիության և, ի վերջո, ներառականության վերաբերյալ:

Տեղեկագրի նախորդ համարում անդրադարձել էինք արդյունաբերության ոլորտի զարգացումներին՝ փորձելով քանդել տնտեսական աճի «կծիկը»: Ձեռքը պահելով տնտեսության զարկերակի վրա՝ այս հոդվածում արդեն կփորձենք վերլուծել ծառայությունների ոլորտի առավել ուշագրավ զարգացումներն ու վերջիններիս շուրջ ձևավորվող սպասելիքները:

Ծառայությունների ոլորտի զարգացումները եղել ու շարունակում են մնալ ՀՀ տնտեսական դաշտի ամենաքննարկվող թեման: Լինելով բավական զգայուն և «ցանցային» ոլորտ՝ վերջինս, ինչպես վիճակված է ՀՀ տնտեսությանը, իր վրա է կրում արտաքին աշխարհի ազդեցությունը: Կախված նրանից, թե վիճակն ինչպես կնետվի համաշխարհային գերտերությունների կողմից, ոլորտը դրսևորում է չափազանց տատանողական միտումներ՝ «ազատ անկումից» մինչև գերտաքացում ու անորոշություն:

Տնտեսական աճն առանց զարգացման: ՀՆԱ և ճյուղերի 2023 թ. աճը դիտարկելիս կարող ենք նկատել, որ ծառայությունների ոլորտի աճն ընդգծված կերպով դանդաղման միտում է ցուցաբերել: Այնուամենայնիվ, արդեն տարեկան արդյունքներով գրանցվել է 11.5% աճ, ինչը շուրջ 6.2 տոկոսային կետով դրականորեն է նպաստել տնտեսական աճին՝ շարունակելով մնալ դրա ամրա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Արդյունաբերության և դրա ենթաճյուղերի աճն ըստ ամիսների, 2021-2023 թթ.[1]

պնդման հիմնական գործոնը:

Ավելորդ անգամ, սակայն, պետք է ընդգծել, որ աճն ու զարգացումն այս դեպքում, իրապես, տարբեր երևույթներ են: Թեև երկրորդ տարին անընդմեջ գրանցվում է բավական բարձր տնտեսական աճ, այնուամենայնիվ, դա չի ենթադրում զարգացում: Պատճառը, թերևս, տնտեսության ներսում կատարվող ձևափոխումներն են, երբ գրանցվում է տնտեսական որոշ ցուցանիշների աճ՝ դրան հաջորդող տնտեսական աճի կառուցվածքի փոփոխությամբ: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական աճը հիմնականում կապված է ներքին պահանջարկի աճի հետ՝ ի հաշիվ, նախ, առևտրաշրջանառության ու ծառայությունների, որոնք աշխուժացան հայտնի գործոններով պայմանավորված: Մինչդեռ տնտեսության արդյունք ստեղծող ճյուղերը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, անհամեմատ ավելի դանդաղորեն են աճել՝ զսպող դեր խաղալով աճի ընդհանուր կառուցվածքում:

ՀՀ-ում ծառայությունների ոլորտը նշանակալի կերպափոխումների ենթարկվեց հատկապես նախորդող երկու տարիներին: Պատկերն ավելի ակնառու է դառնում տնտեսական ակտիվության ցուցանիշի կառուցվածքը դիտարկելիս: Նախորդող ողջ տարվա ընթացքում ծառայությունների ոլորտը դրսևորել է աճի ընդգծված դանդաղման միտում՝ զիջելով շինարարության և առևտրի բարձր աճերին: Նկատվող այս զարգացումներում հատկապես հետաքրքրական է այն, որ փոփոխությունները հանգեցնում են նաև տնտեսական ակտիվության կառուցվածքի, հետևաբար նաև ճյուղերի նշանակության ձևափոխումների: 2023 թ.-ի առաջին 3 ամսվա աճի բարձր հենքի վրա այս տարի ծառայությունների ոլորտն առաջին 3 ամիսներին գրանցել է համեստ աճ՝ այս մրցավազքում զիջելով արդյունաբերության, առևտրի և շինարարության տեմպերին: Ընդ որում, եթե վերջիններիս պարագայում եռամսյակի ավարտին դրսևորվել է աճի արագացման միտում, ապա ծառայությունների ոլորտում նկատելի է հակառակ պատկերը:

Ի վերջո, ինչ է ընկած ճյուղի նման զարգացումների հիմքում: Ներկայացված պատկերն ընդամենը առաջին շերտն է, որի տակ թաքնված են ենթաճյուղերի՝ հաճախ չհիմնավորված, երբեմն էլ խոստումնալից, բայց, միաժամանակ, սակավ բացատրելի տատանումները, որոնց «կծիկը» քանդելու ուղղությամբ էլ կշարժվենք հետազոտության այս հատվածում:

Ինչպես արդյունաբերության, այնպես էլ ծառայությունների ոլորտում նախորդող երկու տարիների ընթացքում զարգացումները կրել են փուլային բնույթ՝ պայ-

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվներ, ՀՆԱ, https://armstat.am/file/doc/99545173.xls



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Արդյունաբերության և դրա ենթաճյուղերի աճը, կուտակային, 2021-2023 թթ.[2]

մանավորված ներքին ու արտաքին գործոններով, զսպող կամ խթանող հանգամանքների ի հայտ գալով, նաև որոշ ենթաճյուղերում ուղեկցվելով աճի կտրուկ տատանումներով ու դերային վերաբաշխումներով:

Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքների առաջին և ակնառու կրողը եղավ հենց ծառայությունների ոլորտը, որտեղ նկատվեց կացության և հանրային սննդի կազմակերպման, տեղեկատվության և կապի, տրանսպորտի, ֆինանսական և ապահովագրական գործունեության և ոլորտի մյուս ենթաճյուղերի նշա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ծառայությունների ոլորտի և դրա ենթաճյուղերի աճն ըստ ամիսների, 2022-2024 թթ.[3]

[2] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2024 թ. մարտին (2024 թ. ապրիլի 25-ի դրությամբ), https://armstat.am/am/?nid=157&id=1025

[3] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82&id=2646



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ծառայությունների ոլորտի աճը և դրա ենթաճյուղերի նպաստումները, կուտակային, 2022-2024 թթ.[4]

նակալի աշխուժացում:

Ծառայությունների ոլորտի նման ռեկորդային աճը շարունակվեց մինչև 2022 թ.-ի ավարտը՝ նախ դանդաղելով, իսկ այնուհետև՝ արդեն 2023 թ.-ին, փոքր-ինչ կայունանալով: Իհարկե, դանդաղման առաջին պատճառներից մեկը կարելի է համարել նախորդ տարում աճի բավական բարձր մակարդակը, որի նկատմամբ անգամ փոքր աճի ապահովումն այս ենթաճյուղի համար նշանակալի է: Մյուս պատճառը, թերևս, արտաքին դրական գործոնների ազդեցության մեղմացումն էր՝ դրամական փոխանցումների աստիճանական նվազումը, ռուսաստանցիների ներհոսքի կրճատումը և այլն, ինչին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

Գծապատկեր 4-ից նկատելի է, որ ոլորտում արձանագրված աճը գերազանցապես պայմանավորված է եղել տեղեկատվություն և կապ, կացության և հանրային սննդի կազմակերպում (այլ կերպ ասած՝ հյուրանոցներն ու հանրային սննդի կետերը), տրանսպորտ, ֆինանսական և ապահովագրական գործունեություն, ինչպես նաև մշակույթ, զվարճություններ և հանգիստ (ներառվում են նաև բուքմեյքերական խաղերն ու խաղատները) ենթաճյուղերի զարգացումներով:

Գաղտնիք չէ նաև, որ այս ենթաճյուղերի աճը խթանող գործոնը գերազանցապես արտաքին բարենպաստ տնտեսական պայմաններն են (ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո ՀՀ տեղափոխված ՌԴ քաղաքացիներ, մեծ ծավալի վերաարտահանումներ ու տրանսֆերտներ): Այս զարգացումներին նախորդել են հետհամավարակային 2021 ու անկումային 2020 թվականները: Հատկանշական է, որ 2022 թվականի միտումները շարունակվել են նաև 2023-ին, սակայն այս դեպքում, պայմանավորված բարձր մակարդակի և արտաքին ազդեցությունների որոշակի նահանջով, աճի տեմպն ավելի դանդաղ էր:

Մեդալի երկու կողմը: Փորձելով բացահայտել ծառայությունների ոլորտի «ներքին խոհանոցը»՝ դիտարկենք ենթաճյուղերի կառուցվածքն ու տեղաշարժը 2023 թ.-ին: Հետաքրքրական է, որ տեղեկատվության

[4] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Ծառայությունների ոլորտի հիմնական ենթաճյուղերի աճը (%) և նպաստումները, 2023 թ.[5]

և կապի ենթաճյուղի թեև դանդաղող, սակայն բարձր աճի առյուծի բաժինը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աճով: Նման աճը, իհարկե, ունի իր պատճառը. Հայաստանում ՏՏ ոլորտի աճին նպաստել է ռուսական ընկերությունների, այդ թվում՝ արտասահմանյան այն կորպորացիաների մասնաճյուղերի ներհոսքը, որոնք Ռուսաստանից տեղափոխվել են Հայաստան:

ՌԴ-ում արտագնա աշխատանքի հայկական համարժեքը: Եթե դիտարկենք ՏՏ ոլորտում աշխատավարձերի և աշխատողների շարժը, ապա իրավիճակն ավելի պարզորոշ կդառնա: Գծապատկեր 6-ը ցայտուն կերպով է արտացոլում ներկայիս իրականությունը ՏՏ ոլորտում: Որքան էլ ասվածը չափազանցված, նույնիսկ իրականությունից հեռու թվա, այնուամենայնիվ, 2022 թ.-ին հայաստանյան ՏՏ ոլորտը դարձել էր ռուսական շինարարության ոլորտի հայկական համարժեքը: Այլ կերպ ասած, եթե հայերն իրենց «փրկությունը» գտնում էին ՌԴ շինարարության ոլորտում աշխատելով ու եկամուտ գեներացնելով, ապա հայաստանյան ՏՏ ոլորտը հանգրվան դարձավ տասնյակ հազարավոր ռելոկանտների համար:

Համաձայն Modex-ի կատարած ոլորտային հետազոտության[6]՝ 2023 թվականի

[5] ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակն ըստ ամիսների, 2023 թ., https://armstat.am/am/?nid=82&year=2023, հեղինակի հաշվարկներ:

[6] Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում, 2023 թ., Modex վերլուծական կենտրոն, https://modex.am/wp-content/uploads/2024/04/IT-study_23.pdf?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR1cs1VgtP7Btc2PzJi3P0jK-7TlpC-NZlYw03p4qouGhQcn8oFZEaLe8fM8_aem_AQSy2Piq_zOIMBaDd183VYtADpNFFZgdij7eobGxiPC5q-XnY_O57LpUtFI5x_I7oka-Nd_rP8RbiqX2dIdYdnop



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

ՏՏ ոլորտում աշխատավարձերի և աշխատողների թվաքանակի փոփոխությունը, %[7]

ընթացքում Հայաստանի ՏՏ ոլորտում գործունեություն է ծավալել 11671 տնտեսվարող՝ 46%-ով ավելի շատ, քան նախորդ տարում, որի 66,1%-ը՝ որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 33,9%-ը՝ որպես ընկերություն: Թեև տարեվերջին նկատվել է վերջիններիս թվի նվազման միտում, այնուամենայնիվ, 2022 թ.-ի տարեվերջի համեմատ աճել է շուրջ 57%-ով: Իսկ որքանո՞վ է այս զարգացումը շահեկան պետական բյուջեի համար. ՏՏ ոլորտի վճարած հարկերը 2023 թ.-ին գրեթե կրկնակի աճել են՝ կազմելով 135 մլրդ դրամ[8]: 2023 թ.-ի դեկտեմբերի դրությամբ ՏՏ ոլորտում ներգրավված աշխատողների թիվը 61,9%-ով ավելին էր, քան նախորդ տարում, ընդ որում, վերջինիս 44.2 տոկոսային կետը պայմանավորված է եղել Ռուսաստանից մասնագետների ներհոսքով (27.3%-ը՝ օտարերկրացի):

Հետաքրքրական է հատկապես այն, որ օտարերկրացիների մասնաբաժինն աշխատողների թվում 4.1%-ից հասել է 27,3%-ի, ընդ որում, 2023-ի տարեվերջի դրությամբ ոլորտում աշխատող օտարերկրացիների 89%-ը եղել է ՌԴ քաղաքացի:

ՏՏ ոլորտի այս հախուռն զարգացումներին ոչնչով չէր զիջում ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտի վերջին 2 տարիների առաջընթացը: Այս ոլորտը 2022 թ.-ին Հայաստան տեղափոխված ռուսաստանցիների ներհոսքից ամենից շատ շահածներից էր: Հատկանշական է, որ այդ ընթացքում բանկերը ռեկորդային շահույթ ապահովեցին: Իհարկե, 2023 թ.-ին նույնպես բանկերի շահույթը բարձր էր, սակայն մոտ 9%-ով զիջում էր նախորդ տարվա ցուցանիշին: Վիճակագրական տվյալները վկայում են, որ 2022 թ.-ը ֆինանսական ոլորտի համար գագաթնակետն էր[9]:

Ներճյուղային այս զարգացումներին անդրադառնալիս չենք կարող չսևեռվել կացության և հատկապես հանրային սննդի կազմակերպման ու տրանսպորտի (հատկապես՝ օդային) ենթաոլորտների զարգացումների վրա: Առաջին հայացքից անգամ ակնհայտ է, որ այս ենթաոլորտների աճը նույնպես ուղղակիորեն կրում է արտաքին բարենպաստ գործոնների ազդեցությունը: Տրամաբանական է, որ մեծ թվով ռելոկանտների ու զբոսաշրջիկների

[7] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, 1.4.2. Աշխատանքի վարձատրություն և աշխատողների թվաքանակ, https://armstat.am/am/?nid=82
[8] ՀՀ ՊԵԿ, Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, https://src.am/am/getMenusContents/120
[9] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, 2022 թ., https://armstat.am/am/?nid=82&year=2022



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

ՌԴ քաղաքացիների և հնդիկների զուտ ներհոսքը, 2022-2024 թթ., %[10]

ներհոսքը պետք է աշխուժացներ ծառայությունների նշված ենթաճյուղերը, ինչի ականատեսն ենք արդեն երկրորդ տարին անընդմեջ: Միաժամանակ, առաջանում է հետևյալ հարցադրումը. ինչու՞ է այս ենթաոլորների աճի դանդաղումը տեղի ունենում համեմատաբար ցածր տեմպերով:

Երկու քարի արանքում: Այս հարցի պատասխանը փնտրենք օտարերկրացիների, մասնավորապես՝ ՀՀ տնտեսության համար ինչ-որ չափով շոկային համարվող հնդիկների և ռուսների ներհոսքի ու արտահոսքի ցուցանիշներում, որոնք որքան էլ անսպասելի, սակայն, միաժամանակ, տնտեսության մեջ նոր պայմաններ թելադրող գործոններ են: Արդյունքում, ի դեմս ներհոսքի այս 2 խոշոր ալիքների, ՀՀ տնտեսությունը հայտնվեց երկու քարի արանքում. մի իրավիճակ, որին պետք էր հարմարվել և հարմարեցնել նաև ներքին տնտեսությունը:

Նկատելի է, որ ՌԴ քաղաքացիների թիվն իր գագաթնակետին է հասել 2023-ի հունիսին[11], որից հետո դանդաղորեն սկսել է նվազել: Ռուսաստանցիների մեծ մասն աշխատում էր ռելոկացված ընկերություններում (ընդ որում, այդ ընկերություններից շատերը գործում են Հայաստանի ՏՏ համայնքից մեկուսի):

Եթե հայաստանյան միջավայրն ու տնտեսությունը նախորդող տարիներին հարմարվել էին ռուսների ներկայությանն ու մասնակցությանը ներտնտեսական տարբեր զարգացումներում, ապա 2023 թ.-ի 2-րդ կեսին նկատված զարգացումների նոր ալիքը հերթական շոկը դարձավ ինչպես ՀՀ տնտեսության, այնպես էլ հասարակության համար, երբ սկիզբ առավ հնդիկների զանգվածային ներհոսքը ՀՀ: Ներհոսքի այդ ալիքն իր գագաթնակետին հասավ արդեն սեպտեմբերին, որն աստիճանաբար սկսեց կրճատվել արդեն հաջորդող ամիսներին: Հնդիկները գերազանցապես աշխատանքային միգրանտներ են, «էժան» աշխատուժ ՀՀ տնտեսության, սակայն, միաժամանակ, խոչընդոտ՝ աշխատանք փնտրող և որակավորում չպահանջող ոլորտներում աշխատել ցանկացող ՀՀ քաղաքացիների համար:

Ամփոփելով ծառայությունների ոլորտում վերջին երկու տարիներին տեղի ունեցող զարգացումները՝ կարող ենք ևս մեկ անգամ ընդգծել, որ ինչպես տնտեսության մյուս ճյուղերը, այնպես էլ ծառայությունների ոլորտը զերծ չէ արտաքին գործոնների ազդեցությունից: Ավելին, լինելով մի շարք ուղղություններով այդ ազդեցությունների ուղղակիորեն կրողը, վերջինս ավելի կտրուկ կերպով է արձագանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխությանը:

[10] ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, սահմանահատումների վերաբերյալ վիճակագրություն, https://migration.am/statistics

[11] Տես նույն տեղում:

ՀՀ տնտեսության մեջ վերջին տարիներին տեղի ունեցող վերափոխումները, որոշ ոլորտների դերի բարձրացումն ու անկումը թելադրում են նաև ծառայությունների ոլորտի հետագա զարգացման ուղիները: Որքան էլ ենթադրենք, որ արտաքին ազդեցություններն անցողիկ են, միևնույն է, պետք է գիտակցել, որ դրանք, այնուամենայնիվ, թողնում են իրենց հետքը՝ գործունեության նոր մոտեցումների, ուղիների, աջակցության նոր կառուցակարգերի և փաթեթների առաջացման ճանապարհով: Թե ինչ ուղղությամբ «կպտտվի ծառայությունների ոլորտի ղեկն» այս տարի, ցույց կտան ընթացիկ զարգացումներն ու տնտեսության տեղաշարժերը: Սակայն, մի բան հստակ է. պետք է հաշվի առնել, որ, ամեն ինչից զատ, ազգային տնտեսությունն ունի իր դիմագիծը, ըստ որի՝ ստեղծվում է նրա բրենդը, որով էլ ներկայանում է արտաքին աշխարհին ու տարբերվում: Ուստի, ծառայությունների ոլորտը, որպես տնտեսության դիմագիծն ուրվագծող և արտապատկերող ենթաոլորտների ամբողջություն, ավելի քան երբևէ պետք է արտացոլի տնտեսական աճի իրական նշանակությունը, այն է՝ լինել որակյալ, բազմաճյուղ և ներառական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, սահմանահատումների վերաբերյալ վիճակագրություն, https://migration.am/statistics
2. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2024 թ. մարտին (2024 թ. ապրիլի 25-ի դրությամբ), https://armstat.am/am/?nid=157&id=1025
3. ՀՀ ՊԵԿ, Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, https://src.am/am/getMenusContents/120
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվներ, ՀՆԱ, https://armstat.am/file/doc/99545173.xls
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակն ըստ ամիսների, 2023 թ., https://armstat.am/am/?nid=82&year=2023
6. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, 1.4.2. Աշխատանքի վարձատրություն և աշխատողների թվաքանակ, https://armstat.am/am/?nid=82
7. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, 2022 թվական, https://armstat.am/am/?nid=82&year=2022
8. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82&id=2646
9. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում, 2023 թ., Modex վերլուծական կենտրոն, https://modex.am/wp-content/uploads/2024/04/IT-study_23.pdf?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR1cs1VgtP7Btc2PzJi3P0jK7TIpC-NZIYw-03p4qouGhQcn8oFZEaLe8fM8_aem_AQSy2Piq_zOIMBaDd183VYtADpNFFZgdij7eobGxiPC5q-XnY_O57LpUtFI5x_I7oka-Nd_rP8RbiqX2dIdYdnop

Нарине ПЕТРОСЯН
Аспирант, АГЭУ

ПУЛЬС ЭКОНОМИКИ

ГОЛОВОЛОМКА ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА: ПО СЛЕДАМ СФЕРЫ УСЛУГ

В условиях высокого экономического роста, который длится уже второй год, продолжаются жаркие дискуссии об экономическом росте, его реалистичности, правдивости, ценности и, в конечном итоге, инклюзивности.

В предыдущем номере мы говорили о развитии событий в промышленности, пытаясь разорвать виток экономического роста. Продолжая следить за пульсом экономики, статья, вышедшая уже во втором выпуске, фокусируется на наиболее примечательных событиях в секторе услуг и ожиданиях, сформировавшихся вокруг него.

Ключевые слова: *экономический рост, информационные технологии, приток, конкурентоспособность, страхование, неопределенность*

Narine PETROSYAN
PhD student, ASUE

PULSE OF ECONOMY

PUZZLE OF ECONOMIC GROWTH: IN THE TRAILS OF THE SERVICE SECTOR

With strong economic growth now in its second year, a heated debate continues about its feasibility, truthfulness, value, and ultimately, inclusiveness.

In the previous issue, we referred to the developments in the industry sector, trying to break the coil of economic growth. Continuing to follow the pulse of the economy, this second issue focuses on the most remarkable developments in the service sector and the expectations formed around it.

Keywords: *economic growth, information technology, inflow, competitiveness, insurance, uncertainty*